



Շաբաթական Ձեկույց 31 դեկտեմբեր 2012

*Հասկանալ ֆինանսական շուկաները,
տեղեկատվությունը և վերլուծությունները
գիտակցված ներդրումների նպատակով*



Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների շարքի ութերորդ հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսական ու տնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, բայց նաև անդրադառնալով համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում, Եվրոպայում և Ասիայում:

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- Բյուջետային ճգնաժամի շուրջ անվստահությունը նվազեցրեց ամերիկյան արժեթղթերը և պետական պարտատոմսերը, սակայն , ընդհանուր առմամբ արժեթղթերը աճեցին՝ տնտեսական արտադրանքում կանխատեսվող աճի, ավելի մեծ թվով աշխատատեղերի ստեղծման, գործազրկության մակարդակի հաստատուն նվազման և բերավաճված տնային հատվածի ֆոնին:
- Եվրոպական արժեթղթերը նվազեցին ամերիկյան բյուջետային ճգնաժամի շուրջ անհանգստության պատճառով, սակայն դա համընկավ Եվրոյի արժեքի կայունացման հետ: Իտալիան գրավեց ներդրողների վստահություն պետական պարտատոմսերի վաճառքի ընթացքում, սակայն դեռ կանգնած է 5 քառորդանոց ճգնաժամի մարտահրավերի առջև:
- Ճապոնական տնտեսությունը խառը դինամիկա էր ցուցադրում, քանզի արժեթղթերը աճեցին և Toyota-ն դարձավ աշխարհի խոշորագույն մեքենա արտադրողը: Տնտեսությունը սակայն, տարի ընթացքում նվազում էր: Ռուսաստանը իր հերթին

Հնդկաստանի հետ կնքեց 3 միլիարդ արժույթյամբ ռազմական ինքնաթիռների գործարք:

- Դանդաղ աճի և ամերիկյան բյուջետային ճգնաժամի շուրջ մտահոգված՝ ներդրողները շրջվեցին դեպի ոսկու շուկա՝ բարձրացնելով գները 12-րս տարին անընդմեջ: Նավթի գները անկում ապրեցին, քանզի դիզելային վառելիքի պահուստները աճեցին և ամերիկյան պահանջարկը դանդաղեց:
- Վրաստանը անսպասելի մարտահրավերի առջև կանգնեց, քանի որ Վրաստանի Սևծովյան Քուլեվի նավահանգստի ռազմավարական նշանակություն ունեցող նավթային տերմինալում, որը պատկանում է Ադրբեջանի Հանրապետության պետական նավթային ընկերությանը (SOCAR), աշխատակիցները գործադուլ են հայտարարել:
- Հայաստանի ՀՆԱ-ն 2011թ. 4,7 տոկոսից 2012թ. աճեց մինչև 7 տոկոս; ընդհանուր արտաքին պարտքը աճեց, սակայն սպառողական գների ինֆլյացիան նվազեց մինչև 2005թ. նվազագույն մակարդակները:

Ամերիկյան շուկաները մտահոգություն են արտահայտում մոտեցող բյուջետային վերջնաժամկետի վերաբերյալ:

Անցած շաբաթ ներդրողների ***անորոշությունը՝ կապված «բյուջետային անդունդ» կոչվող մոտալուտ բյուջետային վերջնաժամկետի հետ*** դարձավ ամերիկյան արժեթղթերի անկման պատճառ: Հավանաբար, ամերիկյան շուկաները կդառնան ավելի տատանողական 2013թ. հունվարի 1-ի վերջնաժամկետի կապակցությամբ, երբ ավտոմատ կերպով տեղի կունենա 600 միլիարդ դոլարի տնտեսում ծախսերի կրճատման և հարկերի բարձրացման միջոցով: Մինչև «բյուջետային անդունդի» խնդիրը չլուծվի, ապա եկող տարվա առաջին կեսին արդյունքները կարող են ԱՄՆ-ում նոր ճգնաժամի պատճառ դառնալ :

2012թ. առևտրի վերջին շաբաթվա փակմանը Ամերիկյան տասնամյա պարտատեմները հասավ Երկրորդ Համաշխարհային Պատերազմից նվազարույն տարեկան միջինին, քանզի ներդրողները ճնշում էին զգում համաշխարհային գունատ աճի, Եվրոպական պարտքային ճգնաժամի և ԱՄՆ-ի տնտեսության դանդաղ վերականգման պատճառով: Մասնավորապես, ուղենիշ հանդիսացող տասնամյա պարտատոմսերը նվազեցին 18 բազային կետով, կամ 0,18 տոկոսային կետով մինչև 1,7 տոկոս 2012թ. համար՝ արտացոլելով անկում երրորդ տարին անընդմեջ: Արժեթղթերը նվազեցին հինգերորդ օրն անընդմեջ՝ շաբաթը ավարտելով 2 տոկոսանոց անկումով, թեպետ 2012թ.-ին արժեթղթերի ընդհանուր դինամիկան դրական էր, քանզի բոլոր երեք արժեթղթային ինդեքսները գրանցեցին տարեկան 6-14 տոկոս աճ:

Ընդհանուր առմամբ, տարվա ավարտը նշանավորվեց 2013թ. ամերիկյան տնտեսական արտադրանքում 2 տոկոսանոց չնչին աճի կանխատեսումներով՝ հետևելով 2012թ. 2,2 տոկոս աճին: Թեպետ գործազրկության մակարդակը դեկտեմբերին մնաց 7,7 տոկոսի վրա, որը նվազագույնն է հանդիսանում 2008թ.-ից, գործազրկության մակարդակի ընդհանուր միջինացված ցուցանիշը 2000-2007թթ. համար կազմում էր 5 տոկոս, թեպետ 2012թ. ամերիկյան տնտեսությունը ստեղծեց մոտ 1,7 միլիոն նոր աշխատատեղ: Դրական նշաններից էին նաև նոր տների կառուցումը՝ հասնելով վերջին երեք ամիսների բարձրագույն մակարդակին: Սա նաև հանդիսանում է բնակելի տների կառուցման ոլորտում լավագույն

արդյունքն է հանդիսանում վերջին 4 տարիների ընթացքում: Սա կապված է Ամերիկյան տնտեսի շուկայում վարկերի ռեկորդային ցածր տոկոսների հետ:

Ավելի մեծ վստահություն Եվրոպայում

Եվրոպական շուկաները անցած շաբաթ տարին ***ավարտեցին արժեթղթերի անկումով***, որը վերջ դրեց հինգշաբաթյա աճը: Եվրոպական արժեթղթերի անկման համար պատճառ հանդիսացավ ԱՄՆ-ի բյուջետային ճգնաժամի շուրջ մտահոգությունները, սակայն համընկավ նաև եվրոյի արժեքի երկամյա անկման դադարի հետ, քանզի Եվրոպական Կենտրոնական Բանկը հանգստացրեց ներդրողների մտահոգությունները՝ խոստանալով պահպանել արժույթի արժեքը: Ընդհանուր 2012թ. եվրոն 2 տոկոս աճ ցուցադրեց՝ անցյալ տարվա 3,2 տոկոս և 2010թ. 6,5 տոկոս անկման ֆոնին:

Անցած ամիս Իտալիայի վարչապետ Մարիո Մոնտիի ստիպողական հրաժարականից հետո Իտալիան պայքարում էր քաղաքական անկայունության նոր շրջանը հաղթահարելու համար: Երկիրը, սակայն, կարողացավ հասնել ներդրողների վստահության որոշակի մակարդակի անցած շաբաթ պետական տասնամյա պարտատոմսերի վաճառքի ընթացքում: Այնուամենայնիվ, ***Իտալիան լուրջ մարտահրավերի առջև է կանգնած*** ունենալով մոտ 2 տրիլիոն եվրոյի պարտք, որը համապատասխանում է Իտալիայի ՀՆԱ-ի մոտ 130 տոկոսին՝ ունենալով ևս 420 միլիարդ եվրոյի կարիք 2013թ. պետական պարտատոմսերի եկամուտից իր պարտքի սպասարկման պայմանները կատարելու համար: Բացի այդ, Իտալիայի տնտեսությունը վերջին 5 քարոզներում գտնվում էր ճգնաժամի մեջ, և ակնկալվում է, որ 2012թ. կնվազի ևս 2,4 տոկոսով:

Ֆրանսիայում սոցիալիստ նախագահ Ֆրանսուա Օլանդի կառավարությունը մարտահրավերի առջև կանգնեց, երբ դատարանը հակասահմանադրական համարեց միլիոնատերերի 75 տոկոս պլանավորած հարկը: Հարուստներին ուղղված առաջարկված հարկատեսակը 18 տոկոսով կավելացնեի 1 միլիոն եվրոյի (\$1.32 միլիոն) համարժեք անհատական եկամուտ ունեցողների հարկումը, որի նպատակն էր պետության համար հարկման արդյունքում ապահովել 500 միլիոն եվրո: Այս որոշումը խանգարիչ հանգամանք էր կառավարությունն նախագծի համար ՀՆԱ-ի հանդեպ պարտքը 2012թ. 4,5 տոկոս կանխատեսված մակարդակից 2013թ կրճատել մինչև 3 տոկոս:

Հայացք Ասիային

Ճապոնական տնտեսությունը 2012թ. նշանավորվեց խառը դինամիկայով, քանզի Nikkei stock ինդեքսը տարվա ընթացքում աճեց ավելի քան 20 տոկոսով, սակայն աճը պայմանավորված էր իենայի արժեզրկմամբ, որը 2012թ. նվազեց 14 տոկոսով: Դեկտեմբերի խորհրդարանական ընտրություններում ընդդիմության հաղթանակը ներկայացրեց ճապոնական նոր կառավարության քաղաքականությունը «դրամային համարձակ մեղմացման» առումով, ինչը ներառում է քայլեր ուղղված արժույթի հետագա թուլացմանը և ինֆլյացիոն թիրախի բարձրացմանը 2013թ. 3 տոկոսանոց տնտեսական աճի նպատակին հասնելու նպատակով՝ փորձելով ավարտին հասցնել 2007թ. շարունակվող Ճապոնիայի 7 տոկոսանոց տնտեսական անկումը:

Կային նաև լավնորություններ. մեքենա արտադրող ճապոնական Toyota ընկերությունը առաջ անցավ General Motors-ից՝ որպես աշխարհի խոշորագույն մեքենա արտադրող ընկերություն, ինչպես ներքին շուկայում այնպես էլ արտահանումներում կտրուկ աճ գրանցելուց հետո: Toyota-ն կարողացավ վաճառքներում գրանցել 22 տոկոսանոց աճ՝ 2012թ. վաճառելով 9,7

միլիոն մեքենա՝ ի հեճուկս մարտահրավերների շարքի՝ մեքենաների հետևանքից մինչև բոյկոտ չինական որոշ գնորդների կողմից: 2012թ. մեքենաների արտադրության մեջ գրանցելով 26 տոկոս ընդհանուր աճ, Toyota group-ը 2013թ. նոր աճ է կանխատեսվում՝ պայմանավորված, հիմնականում Toyota և Lexus բրենդերի վաճառքների համաշխարհային աճի սպասումներով: Հատկանշական է, որ Toyota-ն կարողացավ հաղթահարել բացասական ադդեցությունը, որը իր քիմիայի եկավ այն բանից հետո, երբ անցած շաբաթ ընկերությունը ստիված եղավ 1,1 միլիարդ դոլարի տույժ վճարել անսարքին արգելակների հետ կապված մեքենատերերի հայրը բավարարելու նպատակով: Ընկերությունը համաձայնեց նաև ստեղծել 250 միլիոն դոլարանոց ֆոնդ, որը կօգտագործվի այս գործի բացասական արձագանքների պատճառով մեքենաների արժեքի նվազման դիմաց Toyota մեքենաների նախկին սեփականատերերին փոխհատուցելու նպատակով:

Անդրադառնալով այլ զարգացումներին՝ պետք է նշել, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի այցը Հնդկաստան եզրափակվեց 3 միլիարդ դոլար արժողությամբ նոր պայմանագրով, որը ներառում էի ռուսական ռազմական ինքնաթիռների վաճառք Հնդկաստանին: Պայմանագիրը, որը կնքվեց դեկտեմբերի 24-ին, գույքովեց մոտ 1 միլիարդ դոլարի ներդրումների մասին պայմանագրով ռուս-հնդկական միասնական առևտրային և տեխնոլոգիական ծրագրերում:

Ապրանքայի շուկա՝ ոսկին աճում է, իսկ նավթը՝ նվազում՝

Արժույթային շուկայում գերիշխում էր **եվրոյի արժեքի կայունացումը**՝ 2012թ. համար գրանցելով 2 տոկոսանոց աճ և ավարտելով երկամյա անկումը: Այդ ընթացքում ճապոնական իենան նվազեց 10,5 տոկոսով, որին հետևեցին նմանատիպ կորուստները բրազիլական ռեալի հետ, որը 2012թ. դոլարի համեմատ կորցրեց 8,8 տոկոս՝ ինայից հետո դառնալով արժույթային ամենախոշոր արժեզրկումը: Արժույթային հաղթարշավը գլխավորում էր Կորեական վոնը, որը դոլարի դիմաց գրանցեց 7,7 տոկոս աճ: Սրան հաջորդում է Հարավաֆրիկյան ռանդը, որը այս ամիս գլխավորում է բոլոր հիմնական արժույթների աճը դոլարի դիմաց՝ թանկանալով 5,1 տոկոսով:

Արտացելով համաշխարհային տնտեսության դանդաղ աճի, եվրոպական պարտքի անկայուն ծավալների, ԱՄՆ-ի բյուջետային ճգնաժամի վերաբերյալ մտահոգությունը՝ համաշխարհային **ներդրողները շարունակում էին շրջվել դեպի ոսկու շուկան**: Համեմատելով 2011թ.՝ ներդրողները 2012թ. ոսկու կողմից աջակցվող փոխանակվող ապրանքների միջոցով 60 տոկոսով ավել ոսկի ձեռք բերեցին՝ ոսկու պահուստները հասցնելով ռեկորդային 140,5 միլիարդ մակարդակի: Ոսկու գները անցած շաբաթ տարին ավարտեցին 6 տոկոսանոց աճով, մինչև 1,656,85 դոլար ունցիայի դիմաց՝ արտացելով հաջորդական աճ 12 տարիների ընթացքում: Համաշխարհային ապրանքայի շուկայում պղնձի գները գրանցեցին 4 տոկոսանոց աճ, մինչև տոննայի դիմաց 7,903 դոլար: Եգիպտացորենի և ցորենի գները աճեցին համապատասխանաբար 6,8 և 17 տոկոսով: Այդ ընթացքում համաշխարհային **նավթի գները տարին փակեցին թեթևակի անկումով**, քանզի դիզելային վառելիքի գները թույլ պահանջարկի պայմաններում և անցած շաբաթ ԱՄՆ-ում դիզելային վառելիքի պահուստների 223 միլիոն բարել աճի պատճառով թանկացան մինչև 9 ամսյա բարձրագույն մակարդակները: Միաժամանակ, միտումը կապված էր անցած շաբաթ ԱՄՆ-ում բենզինի սպառման 5,5 տոկոս ակնման հետ՝ օրական 18,9 միլիոն բարել, ինչը 2012թ. ամենամեծ անկումն է հանդիսանում: Սա հատկանշական է այն պատճառով, որ Միացյալ Նահանգները նավթ սպառող երկրներից խոշորագույնն է, որին հաջորդում են Չինաստանը և Ճապոնիան:

Ռուսաստանի Լուկոյլ ընկերությունը դեկտեմբերի 24-ին հայտարարեց, որ մերժել է ExxonMobil-ի առաջարկը գնել Իրաքյան լայն նավթային դաշտավայրի մասնաբաժիններից: 50 միլիարդ դոլար արժողությամբ West Qurna-1 ծրագրի 60 տոկոսանոց մասնաբաժինը ձեռք բերելու առաջարկից հրաժարվելու որոշումը, որը ըստ հաշվարկների՝ մի դաշտավայր է պարունակող 9 միլիարդ բարել նավթ, արտահայտեց Լուկոյլի կողմից արված քայլը կենտրոնանալ արևմտյան Qurna-2 նավթային դաշտում ունեցած 75 տոկոս մասնաբաժնի վրա, որը ևս հանդիսանում է խոշոր իրաքյան էներգետիկ դեպոզիտ: Այս որոշումը China National Petroleum Corporation-ին թույլ է տալիս առաջ ընթանալ West Qurna-1 ծրագիրը ձեռք բերելու նպատակով: Իրաքյան էներգետիկ հատվածի հեռանկարը, սակայն, վնասվեց վերջերս Հյուսիսային Իրաքում քրդական մարզային կառավարության կողմից նավթի արտահանման դադարեցման պատճառով : Թեպետ նավթային արտահանում ների դադարեցումը կապված էր 848 միլիոն դոլար ուշացող պարտքի դիմաց անհամաձայնության հետ, որը իրաքյան կառավարությունը պետք է վճարեր քրդերին, այս քայլը ավելի խորը արմատներ ունի և հասնում է մինչև հակամարտությանը քրդական ինքնավար մարզի և Իրաքի կենտրոնական կառավարության միջև այն բանից հետո, երբ քրդերը միակողմանիորեն կնքեցին մոտ 50 տարբեր նավթային պայմանագրեր արտասահմանյան էներգետիկ զանազան ընկերությունների հետ:

Դեկտեմբերի 24-ին, Վրաստանի Սևծովյան նավահագիստ Քուլեվիի ռազմավարական նավթային տերմինալում նավթային աշխատակիցները երրորդ օրը անընդմեջ հացադուլ հայտարարեցին՝ **նոր վրացական կառավարության համար դառնալով անսպասելի մարտահրավեր:** Մոտ 200 աշխատակից, կազմակերպվելով Վրաստանի Միավորված Առևտրային Միության կողմից՝ գործադուլ են հայտարարում բարձր աշխատավարձի և բարելավված աշխատանքային պայմանների պահանջով: Քուլեվիի տերմինալը պատկանում է Ադրբեջանի Հանրապետության Պետական Նավթային Ընկերությանը (SOCAR), որը արդեն իսկ ներդրել է ավելի քան 350 միլիոն դոլար տերմինալի նորացման և բարելավման նպատակով, ինչը ադրբեջանական հում նավթը տանկերների վրա բեռնելու և Սև Ծովով տեղափոխելու համար կենտրոն է հանդիսանում:

Հայաստանյան իրադարձություններ՝

Համաձայն Հայաստանի նախարարությունների տարին փակող պաշտոնական զեկույցների՝ Հայաստանի **ՀՆԱ-ն 2012թ. գրանցեց 7 տոկոսանոց աճ**, և ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելայնը նշեց, առանձնացնելով ինֆլյացիայի շարունակվող ցածր մակարդակը և խոստանալով 2013թ. ադրբեջանական կրճատում 2-3 տոկոսով, որը այժմ գնահատվում է 34 տոկոս՝ 2012թ. 36 տոկոսի և 2008թ. 24 տոկոսի համեմատ: Նախարարը զեկույցեց նաև, որ 2012թ. հարկերի հավաքումը ակնկալվում է հասցնել մինչև ՀՆԱ-ի 21,66 տոկոսին, և 2012թ. ընդհանուր **արտաքին պարտքը կազմեց մոտ 4,38 միլիարդ դոլար**՝ 252 միլիոն դոլարով գերազանցելով 2011թ. 4,128 միլիարդ մակարդակը:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2011թ. տնտեսական աճը կազմել էր 4,7 տոկոս, սակայն կառավարությունը **2013թ. համար նոր՝ ՀՆԱ-ի 7 տոկոսանոց աճի թիրախ է ընտրել, սակայն կանխատեսողները 6,2 տոկոս ՀՆԱ-ի աճը ավելի իրատեսական են համարում:** Անցած շաբաթ առանձին մի հայտարարությամբ Հայաստանի պաշտոնյաները հայտարարեցին մոտ 11 միլիոնանոց չինական օգնության փաթեթի մասին, որի մեծ մասը կուղղվի «մաքսատների նորացման ու բարելավման» աջակցությանը, ինչպես նաև կներառի օժանդակություն գյուղատնտեսական, առողջապահական և տրանսպորտային բնագավառների համար:

Անցած շաբաթ Հայաստանի կառավարությունը հրապարակեց սպառողական գների ինֆլյացիայի վերաբերյալ նոր վիճակագրությունը՝ *ցույց տալով ինֆլյացիայի անկում 2012թ.*, որը հանդիսացավ նվազագույն մակարդակը 2005թ. սկսած: Ազգային Վիճակագրական Ծառայության համաձայն՝ 2012թ. տարեկան ինֆլյացիոն մակարդակը 2,6 տոկոս էր , ինչը էապես ցածր է կառավարության թիրախ հանդիսացող 5,5 տոկոսից: 2012թ. սպառողական գների ինդեքսը շարժում էին հիմնականում մթերքից բացի սպառողական ապրանքների աճող գները , որոնք աճեցին 4,6 տոկոսով, թեպետ մթերքի գները աճեցին միայն 2 տոկոսով: Այս թվերը կապված էին նաև 2012թ. հունվար-հոկտեմբեր ամիսների գյուղատնտեսական արտադրանքի 8 տոկոսանոց աճի հետ, ինչը կապված էր եղանակային ավելի լավ պայմանների և տեղական մրգերի և բանջարեղենների վրա մանրածախ ցածր գների հետ:

Անցած շաբաթ իր անակնկալ հայտարարությամբ Հայաստանի կառավարությունը որոշեց հետ կանգնել իր նախկին որոշումից վաճառել երեք նախարարություն, այդ թվում նաև արտաքին գործերի նախարարությունը տեղակայող Երևանյան շենքը: Կառավարության որոշումը կասեցնել հակասական վաճառքը ըստ խոսակցությունների կապված էր գործարքի վերաբերյալ հասարակական ճնշման հետ, և ըստ պետական գույքի պետական գույքի կառավարման գործակալության ղեկավար Արման Սահակյանի՝ կառավարությունը որոշեց աճուրդային ամենաբարձր գնով վաճառել սեփականությունը ավելի մեծ թափանցիկություն ապահովելու համար:

Ըստ 2012թ. հոկտեմբերի սկզբնական որոշման պայմանների՝ շենքը պետք է վաճառվեր Tango ընկերությանը 51,7 միլիոն դոլարի դիմաց: Սա փոքր մասնավոր ընկերություն է , որը պատկանում է արգենտինահայ գործարար Էդուարդո Էռնեսկյանին, որը գործարկում է երկրի միակ միջազգային օդանավակայանը: Դրա փոխարեն, ընկերությունը պարտավորվեց մինչև 2015թ. սեպտեմբերը նախարարությունների համար նոր գրասենյակային շենք կառուցել: Հայաստանի կառավարությունը պարտավորվում է վճարել շինարարության համար վաճառքի արդյունքում ստացված գումարով: Վաճառքը, որը նույնպես սկզբում ընթացել էր փակ, անմրցունակ տենդերի արդյունքում, 14,000 քառակուսի մետր մեծությամբ օֆիսային տարածքը պետք է վերածեր հինգ աստղայի հյուրանոցի, որը պետք է մաս կազմեր «համաշխարհային ճանաչում ունեցող հյուրանոցային շղթայի»:

Հայաստանի պաշտոնյաները հաստատեցին նաև լուրերը առ այն, որ *իրանական պաշտոնյաների հետ նոր բանակցություններ են տարվում*, որ Հայաստանի արտավայրերի «մի քանի հազար հեկտար» վարձով տրվի իրանցիներին նրանց *ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների արածելու նպատակով*: Իրանական հետաքրքրության շարժիչ ուժը Հայաստանին սահմանակցող Իրանի Արևելյան Ազարբայջան նահանգի նահանգապետ Ալիռեզա Բեյգին է, ով ոչ միայն ցանկանում է 4000 հեկտար արտավայր վարձել անասուններին արածեցնելու նպատակով, այլ նաև հետաքրքրություն է հայտնել ձևավորելու նոր «ազատ տնտեսական գոտի», որի մեջ կներառվեն իր Արևելյան Ադրբեջանը և Հայաստանի հարավային Սյունիք մարզը: Այս նոր պոտենցիալ համաձայնագիրը հետևում է վերջին երկու տարիներին Հայաստանից Իրան արտահանվող ոչխարների ծավալների հաստատուն աճին, ինչպես նաև ենթադրում է Սյունիքի մարզում ոչխարների և խոշոր եղջերավոր անասունների բուծման գործունեության հիմնադրում: Ավելի վաղ այս տարի Հայաստանում ոչխարների բուծման վերաբերյալ հետաքրքրություն էին արտահայտել նաև սաուդյան ներդրողների անհայտ մի խումբ:

-Ռիչարդ Գիրագոսյան



TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում